30.09.26 - 10.10.26
09:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
Երևանի պետական համալսարան

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Լայբնիցի անվան Արևելյան և Հարավարևելյան Եվրոպայի հետազոտությունների ինստիտուտի (IOS) համագործակցության շրջանակում **ս.թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 10 Երևանում** կանցկացվի «Միջազգային աշնանային դպրոց–2026»-ը։

Աշնանային դպրոցի նպատակն է ուսումնասիրել, թե հակամարտությունների և քաղաքական վերափոխումների պայմաններում ինչպես է միջազգային իրավունքը մեկնաբանվում, վիճարկվում և օգտագործվում որպես գործիք հատկապես Հայաստանում և Հարավային Կովկասում։ Ծրագիրը մեկտեղում է միջազգային իրավունքի, քաղաքագիտության և տարածաշրջանային ուսումնասիրությունների դիտանկյունները՝ նպաստելով Լայբնիցի անվան Արևելյան և Հարավարևելյան Եվրոպայի հետազոտությունների ինստիտուտի (IOS) և ԵՊՀ-ի միջև համատեղ հետազոտական ու կրթական աշխատանքի, ինչպես նաև կարողությունների զարգացմանը։

Դպրոցը նախատեսված է իրավագիտության, միջազգային հարաբերությունների, քաղաքագիտության կամ հարակից մասնագիտությունների բակալավրիատի բարձր կուրսերի, մագիստրատուրայի ուսանողների և ասպիրանտների համար։

Դիմումներն անհրաժեշտ է ներկայացնել մինչև **ս.թ. հուլիսի 31-ը՝** ուղարկելով daad26@ios-regensburg.de էլեկտրոնային հասցեին։

Աշնանային դպրոցն անցկացվում է Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD) ֆինանսավորմամբ իրականացվող «Վիճարկվող տարածքներ, մասնատված կարգեր. միջազգային իրավունքը և քաղաքականությունը Հարավային Կովկասում» նախագծի շրջանակում։ Նախագիծը «Արևելք-Արևմուտք երկխոսություն» ծրագրի մաս է կազմում, որը ֆինանսավորվում է Գերմանիայի արտաքին գործերի նախարարության կողմից։

Մանրամասներին և դիմում-հայտի ներկայացման կարգին հնարավոր է ծանոթանալ այստեղ։

Հարցերի դեպքում կապ հաստատել հետևյալ էլհասցեների միջոցով՝ ica@ysu.am (Եղիշե Կիրակոսյան, ԵՊՀ), daad26@ios-regensburg.de (Սինդի Վիտկե-Հոլֆելդին, IOS)։

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am